



Ավետիք Իսահակյան

Դու չես հասկանա

Չեմ տեսնում շքեղ զարդերը գարնան,
Վշտից խավարեց գոհարն աչքերիս.
Ծանրացավ աշխարհն ուսերիս վրա,
Զուր ես հարցրնում պատճառը վշտիս:

Ես՝ գավակ ճնշված ուղժբախտ ազգի,
Որ արյունով է իր ուղին թրջում.
Որ դարե՛ր, դարե՛ր թափը իր բազկի
Շղթան է կրծում ժանգոտ, շառաչուն:

Շղթան շառաչուն, ծանրը ու ժանգոտ,
Ինձ տապալել է, կաշկանդել գետնին.
Ինձ տրորում են անցնող ու դարձող,
Դո՛ւ մի կարեկցիր իմ անհուն վշտին:

Իմ մոր սուրբ խոսքը – ծաղրի նշավակ,
Իմ հայրենիքը – սիրտըս ու հոգիս –
Եվ հոշոտում են, պղծում ոտնատակ,
Դու չես ըմբենի անդունդը վշտիս ...

Ես՝ գավակ ճնշված ու փոքրիկ ազգի,
Սրտիս արյունով մեծ վիշտս եմ գրում.
Վերքը անդարման իմ հայրենիքի
Իմ բյուր խոցոտված սրտումս եմ կրում:

Միրեն՛լ, երագեն՛լ, թռչել եմ ուզում,
Բայց շղթան ինձ պինդ գամել է գետնին.
Կուտ լուծը ազգիս՝ ուսերս է փշրում,
Չես կարող հասնել իմ անափ վշտին:

Տիեզերական գայրույթով, թույնով
Արդ՝ ես ինքըս ինձ խայթում եմ ահա՛,
Թո՛ղ մեռնիմ, կորչիմ անհետ, անանուն,
Իմ անհույս վիշտը դու չես հասկանա ...

1908

Թիֆլիս